

կանութեան սկզբունքը» (Principle of Moral) անբաւարար պիտի ըլլար: Այս հարցով, պէտք է բաղդատել Կանտի եւ Հաբերմասի դիրքորոշումները. մինչ Կանտ յստակօրէն *բարոյականը* կը գերադասէ *իրաւականէն*, Հա-բերմաս այս երկու ոլորտները համահաւասար կը նկատէ:

Հաբերմաս, հետագային, քննախօսութեան սկզբունքը („D“) ընդարձակելով, բարոյագիտութեան կողքին, գայն ատակ կը նկատէր՝ *«արդի իրաւական պետութեան»* մը կազմաւորման: Հաբերմասի բարոյական նկատառումները, իրաւական ու քաղաքական հարցերու որպէս հիմք ծառայելու գաղափարը, սակայն, պիտի բախէր մեծ դժուարութիւններու: Այս հարցով, Ապել, որոշ չափով համաձայն է Հաբերմասի հետ: Ապելի համաձայն, *«բարոյականութեան սկզբունքը»* (Principle of Moral) կարելի չէ բոլորովին հեռացնել իրաւա-կան ու քաղաքական ոլորտներէն:

2. Ընդհանրականացման սկզբունքը

Ընդհանրականացման սկզբունքը („U“) կու գայ զօրակցելու եւ ամբողջացնելու քննախօսութեան սկզբունքը („D“): Ընդհանրականացման (կամ համայնացման) սկզբունքին համաձայն, բարոյական կանոնները վաւերական կ'ըլլան, միայն այն ժամանակ, երբ քննախօսութեան բոլոր մասնակիցներուն կողմէ ընդունուած ըլլան: Քննախօսութեան արդիւնք եղող, ընդհանուր համաձայնութեան այս իրավիճակով միայն, Քննախօսութեան բարոյագիտութիւնը կը ստանայ Կանտի *անպայմանական հրամայականի* իրավիճակը: Կանտ կը հրամայէր՝

«Վարուէ՛ միայն այնպիսի անձնական կանոնով (մաքսիմ) մը, որով միաժամանակ կարենաս ցանկալ, որ այդ՝ ընդհանուր բարոյական օրէնք դառնայ:»

Տակաւին՝ աւելին.- մինչ Կանտի *անպայմանական հրամայականը* հիմնուած է անհատի մը բանական մտածումներուն վրայ (ենթակայական իմաստով), Ապելի եւ Հաբերմասի մօտ միջ-ենթակայական (Inter-Subjective) է, քննախօսութեան միջոցով, ուր կը գտնենք բոլոր մասնակիցներու համաձայնութիւնը, որով ընդհանրականացում մը աւելի հիմնաւորուած կը նկատուի:

Ապել, Հաբերմասի *ընդհանրականացման սկզբունքը* („U“), պատասխանատուութեան առումով, անբաւարար գտնելով՝ կը ձեւափոխէ գայն, անոր տալով հրամայական վարուելակերպի սկզբունք, հետեւելով Կանտի անպայմանական հրամայականին.-

«Վարուէ՛ միայն այնպիսի անձնական կանոնով (maxim) մը, որով կարենաս ցանկալ, որ ա՛յն հետեւանքներն ու կողմնակի ազդեցութիւնները, որոնք կրնան բխիլ իւրաքանչիւր մասնակիցի հետաքրքրութիւններուն գոհացում տալու ընթացքին, քննախօսութեան մէջ, համաձայնութիւն մը գոյանայ, որ բոլոր մասնակիցներուն կողմէ ընդունելի ըլլայ:»